Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2018 թվականի հոկտեմբերի 31-ի նիստում,
արձանագրություն N 4,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ.Լ.Աթոյան
«31» հոկտեմբեր 2018 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՀՊՏՀ) ուսումնական գործընթացի որակի ապահովման համար ձևավորում է մասնագիտական ծառայություններ մատուցող փորձագիտական խումբ:

2. Սույն կանոնակարգը սահմանում է փորձագիտական խմբի կազմավորման, գործունեության և հաշվետվողականության ընթացակարգը:

3. Փորձագիտական խմբի ստեղծման նպատակն է՝

- բարելավել կրթական ծրագրերի որակը՝ դասավանդման, ուսումնառության և գիտելիքի գնահատման գործընթացների մշտադիտարկման և գնահատման միջոցով,

- վեր հանել ուսանողների կրթական կարիքները և բարելավել համալսարանի գործունեությունը,
- կիրառել և զարգացնել կրթության ուսանողակենտրոն սկզբունքը,
- աջակցել որակի ներքին ապահովման համակարգի գործարկմանը և որակի ապահովման շրջափուլում ուսանողների մասնակցությանը,
- նպաստել կրթության որակի շարունակական բարելավմանն ու համալսարանում որակի մշակույթի զարգացմանը:

4. Իր գործունեության ընթացքում փորձագիտական խումբը ղեկավարվում է սույն կանոնակարգով, «ՀՊՏՀ» ՊՈԱԿ կանոնադրությամբ[1], ՀՊՏՀ 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով[2], ՀՊՏՀ գործունեության բարելավման գործողությունների պլանով[3], «Դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցման անցկացման ընթացակարգով»[4] և ՀՊՏՀ այլ փաստաթղթերով:

5. Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգում է ՀՊՏՀ որակի ապահովման բաժինը:

II. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Փորձագիտական խմբի գործունեության շրջանակն ընդգրկում է.

6. Կրթական ծրագրերի մշակման գործընթացում խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրում:

7. Մշակվող կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության փորձագիտական գնահատում՝ ըստ արտաքին ու ներքին գործող չափանիշների և չափորոշիչների, կարգերի ու ընթացակարգերի, հանձնարարականների մշակում և տրամադրում:

---

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 1436-Ն որոշում:
[2] Հաստատված է «ՀՊՏՀ» ՊՈԱԿ խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի նիստում:
[3] Հաստատված է «ՀՊՏՀ» ՊՈԱԿ ռեկտորատի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի նիստում:
[4] Հաստատված է «ՀՊՏՀ» ՊՈԱԿ գիտական խորհրդի 2018 թվականի մարտի 5-ի նիստում:

8. Պայմանագրի գործողության ընթացքում, ըստ սահմանված ժամանակացույցի, մեթոդական փաստաթղթերի մշակում՝

- «Ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման կարգ»,
- «Դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծության ընթացակարգ»,
- «Լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների իրականացման կարգ»,
- «ՀՊՏՀ կողմից մատուցվող կրթական ծառայությունների գնահատման ընթացակարգ»,
- «Կրթական ծրագրի առանձին բաղադրիչներից ուսանողների բավարարվածության գնահատման ընթացակարգ»,
- «Շահառուների հարցումների և աշխատաշուկայի մշտադիտարկման կարգ»,
- ուսանողական հարցումների միջոցով ուսանողներին լրացուցիչ ծառայությունների մատուցման հնարավորությունների գնահատում և լրացուցիչ ծառայությունների ցանկի առաջարկում,
- անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը նպաստող այլ փաստաթղթերի մշակում և հանձնարարականների տրամադրում:

9. Ուսումնական գործընթացի (դասավանդում, ուսումնառություն և գնահատում) մշտադիտարկում և գնահատում, հանձնարարականների մշակում և տրամադրում:

10. Դասընթացների իրականացման գնահատման նպատակով դասալսումների կազմակերպում և ուսանողական հարցումների անցկացում ՀՊՏՀ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ միասին և հարցումների արդյունքների վերլուծություն, հանձնարարականների մշակում և տրամադրում:

11. Ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) և մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման աշխատանքներին մասնակցություն ու աջակցություն՝ ըստ մասնագիտական կրթության հավատարմագրման հաստատված չափանիշների[5]:

III. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿԱԶՄԸ

12. Փորձագիտական խումբը ձևավորվում է 16 անդամից, որոնցից 5-ը՝ ՀՊՏՀ ուսանողներ:

13. Փորձագիտական խումբը ձևավորվում է մեկ տարի ժամկետով մրցութային կարգով: Փորձագետների ընտրությունը կատարվում է մրցութային հանձնաժողովի կողմից՝ թեկնածուների (հավակնորդների) ինքնակենսագրականների (CV) և նրանց հետ հարցազրույցի արդյունքների հիման վրա: Փորձագիտական խմբի անդամները ենթակա են փոխատեղման:

14. Փորձագետի թեկնածուն պետք է բավարարի հետևյալ պահանջներին (բացառությամբ ուսանողների)՝

- լինի ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կամ վարչական հիմնական կազմի ներկայացուցիչ,
- ունենա կրթության որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացների ու համակարգերի վերաբերյալ գիտելիք, ինչպես նաև կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և գնահատման փորձառություն (կրթության որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի վերաբերյալ գիտելիքը հավաստող հավաստագրի առկայությունը կդիտվի որպես առավելություն),
- կարողանա կրթության բնագավառում իրականացնել կիրառական հետազոտություններ և վերլուծություններ,
- տիրապետի ռազմավարական և վիճակագրական վերլուծության գործիքակազմին,

[5] Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշում:

- տիրապետի առնվազն 2 օտար լեզվի՝ ներառյալ ռուսերենը:

15. Փորձագետի **ուսանող** թեկնածուն պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

- ունենա կրթության որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացների ու համակարգերի վերաբերյալ գիտելիք (կրթության որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացներին մասնակցության փորձը կդիտվի որպես առավելություն),
- տիրապետի առնվազն 2 օտար լեզվի՝ ներառյալ ռուսերենը:

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՊՏՀ-ն պարտավորվում է.

16. Տրամադրել աշխատանքային համապատասխան պայմաններ:

17. Վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

Փորձագետը պարտավորվում է.

18. Պատշաճ իրականացնել սույն կանոնակարգի երկրորդ բաժնում սահմանված գործողությունները:

19. Կատարված բոլոր աշխատանքների վերաբերյալ կազմել հաշվետվություն և ներկայացնել ՀՊՏՀ որակի ապահովման բաժին: Պահանջի դեպքում վերացնել անճշտությունները և թերությունները:

V. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

20. Փորձագիտական խմբի աշխատանքը սկսվում է 2018 թվականի հոկտեմբերի 15-ից մեկ տարի ժամկետով:

21. Փորձագետի մատուցած ծառայությունների դիմաց պատվիրատուն կատարում է ամենամսյա վճարում՝ համաձայն պայմանագրի գնի: